ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ-ի հուլիսի 18-ից 22-ը ներառյալ

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, Ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Միեր Մարտիրոսյան – ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ

Արտակ Գալստյան - ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության մաքսային գործառնությունների մոնիտորինգի բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետը՝**

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, Եվրասիական տնտեսական հանձնաժողով, հուլիսի 18-22-ը ներառյալ:

3. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար անհրաժեշտ նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին Համաձայնագրի շրջանակներում հետագծման մեխանիզմի գործունեությունն ապահովվելու նպատակով ԵՏՀ առաջնահերթ ակտերի նախագծերի քննարկում:

5. **Քննարկված թեմաները՝**
   Նավիգացիոն կապարակնիքների տեղադրման (հանման) վայրերի որոշումը, նավիգացիոն կապարակնիքները տեղադրող (հանող) իրավաբանական անձանց որոշումը, նավիգացիոն կապարակնիքները ապահովվող իրավաբանական անձի որոշումը, աշխատանքների իրականացման ընթացքում ներկա գտնվող մյուս իրավաբանական անձանց որոշումը:
   Վերահսկող մարմնի և ազգային օպերատորի քայլերը նավիգացիոն կապարակնիքների ակտիվացման (ապաակտիվացման) ընթացքում, քայլերի իրականացման կարգը:
   Իրավիճակների սահմանում, երբ նավիգացիոն կապարակնիքը բեռի տեղափոխման ընթացքում կարող է հանվել առանց հսկողության դադարեցման՝ հետագա վերատեղադրմամբ: Իրավիճակի սահմանում երբ նավիգացիոն կապարակնիքը փոխարինվում է: Թվարկված իրավիճակներում վերահսկող մարմնի և ազգային օպերատորի քայլերը, իրականացման կարգը:

Արտակարգ իրավիճակների սահմանում: Չարտոնված գործողություններ: Արտակարգ իրավիճակներում կամ չարտոնված գործողությունների դեպքում վերահսկող մարմնի և ազգային օպերատորի քայլերը՝ կարգը:

Նավիգացիոն կապարակնիքներում պարունակման ենթակա տեղեկատվության փոխանցման կարգը, փաստաթղթերի պահպանման կարգը, նավիգացիոն կապարակնիքից նախկին տեղեկատվության ոչնչացման կարգը:

Վերահսկող մարմինների և ազգային օպերատորների միջև տեղեկատվության փոխանակման կարգի սահմանումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումների ընթացքում, ԵԱՏՄ անդամ բոլոր պետություններից ժամանած փորձագետների մակարդակով քննարկվել են բոլոր թվարկված թեմաները: Քննարկվել են և ընթացակարգային և տեխնիկական հարցեր: Քննարկումների ընթացքում մեր կողմից ներկայացվում էին ՀՀ շահերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Քննարկվել են պլանավորված բոլոր հարցերը: Ավարտին են հացվել ԵՏՀ առաջնահերթ ակտերի նախագծերի տեքստերն ու բովանդակությունները:

Հանդիպումների, քննարկված հարցերի, կայացրած որոշումների վերաբերյալ արձանագրությունները ՀՀ կուղարկվեն ավելի ուշ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատվությունները, ակնկալվող արդյունքները

Քննարկված փաստաթղթերը ներկայացվելու են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի հաստատմանը:

ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր երկրում պետք է որոշվեն ազգային օպերատորները որոնք իրականացնելու են փոխադրումների հետագծելիությունն ապահովող նավիգացիոն կապարակնիքների կիրառումը: Փոխադրումների հետագծելիությունն ապահովող նավիգացիոն կապարակնիքների կիրառումը ապահովվելու նպատակով պետք է ընդունվեն իրավական ակտեր ազգային օրենսդրության շրջանակներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

25.07.2023թ. **Մհեր Մարտիրոսյան**

Արտակ Գալստյան